



ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԱԶԳԱՅԻՆ ՊԼԱՏՖՈՐՄ  
ԱՐԵՎԵԼԱՆ ԳՈՐԾԵԿՆԵՐՈՒԹՅԱՆ  
ՔՆՂԱՔՄՅՈՒԿԱՆ ՀԱՍԱՐԿՎՈՒԹՅԱՆ ՖՈՐՈՄ



Funded by  
the European Union



ԵՐԵՎԱՆԵՐԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԳԻՐԱՄ

# ԲՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԻՔՆԵՐԸ՝ ԿԵՆՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Կամո Առաքելյան

Երեխաների աջակցության հիմնադրամ

ԱլԳ ՔՀՖ ՀԱՊ ԱԽ5

*Հետազոտությունն իրականացվել է Եվրոպական միության աջակցությամբ:  
Հետազոտության բովանդակությունը բացառապես հեղինակի կարծիքն է և կարող է  
չարտացոլել Եվրոպական միության տեսակետը:*

**Կատարվել է ուսումնասիրություն** Հրազդանի տարածաշրջանի 11` Հանքավան, Արտավազ, Մեղրաձոր, Մարմարիկ, Աղավնաձոր, Ջրառատ, Լեռնանիստ, Քաղսի, Սոլակ, Բջնի գյուղական և Հրազդանի քաղաքային համայնքներում: Կատարված ուսումնասիրությունը վերաբերում է վերոնշյալ համայնքներում ապրող և բնության տված բարիքները հավաքող, իրացնող և իրենց սոցիալական կարիքները հոգացող անձանց: Պարզել ենք այս գյուղական բնակավայրերում ապրող գյուղացիների անունները, տվյալները, թե ով ինչ տեսակի թեյաբույսերի հավաքելով և իրացնելով է զբաղվում:

**Տեղի են ունեցել հանդիպումներ** տեղական ինքնակառավարման մարմինների հետ, որոնց ժամանակ ներկայացվել է նախաձեռնությունն ու նպատակները:

Նպատակ 1. Յուրաքանչյուր համայնքում ճշտել թեյաբույսերի և այլ օգտակար բուսատեսակների առկայության մասին:

Նպատակ 2. Յուրաքանչյուր համայնքում ճշտել թեյաբույսերի և այլ օգտակար բուսատեսակների հավաքմամբ, մշակմամբ և շուկա դուրս բերելով զբաղվող անձանց տվյալները` ստեղծելով **ֆոկլուս խումբ**:

Նպատակ 3. Խմբերին հանդիպումների, քննարկումների, զրույցների և դասընթացների միջոցով **իրազեկել** մի շարք բուսատեսակների հավաքման, չորացման և շուկա դուրս բերելու հմտությունների ու պայմանների մասին:

Նպատակ 4. Հասնել գյուղական բնակավայրերում **ինքնագարգացող և կայուն գյուղացիական տնտեսությունների** ձևավորմանը:

Նպատակ 5. Հասնել գյուղացիական տնտեսությունների կամ անհատ գյուղացիների և սոցիալական ձեռնարկության միջև ուժեղ, փոխշահավետ և գործնական **համագործակցությանը**:

**Յուրաքանչյուր համայնքում** կազմվել և կազմվում են շահառու ընտանիքների ցուցակներ:

**Հեռախոսագանգեր** ենք ունեցել ընտանիքների անդամների հետ, զարնանն աշխատանքները սկսելու հետ կապված:

**Քննարկումների** ժամանակ տեղեկատվություն և անհրաժեշտ գիտելիքներ ենք տրամադրել յուրաքանչյուր բուսատեսակի հավաքման ժամանակաշրջանի, չորացման, պահպանման հետ կապված:

**Որոշ բնակավայրերում** դեռ աշխատանքները չեն ավարտվել, և ցուցակների ձևավորումը դեռ ընթացքի մեջ է:

Մասնավորապես՝

**Աղավնաձոր** համայնքում հանդիպում ունեցանք աշխատակազմի աշխատակիցներ Մակիչ Դանիելյանի և Անի Սարգսյանի հետ: Ներկայացվեց նախագիծը, և առաջարկեցինք տեղեկություն տալ գյուղում թեյաբույսեր հավաքող և շուկայում իրացնող անձանց մասին: Մի քանի օր անց մեզ փոխանցվեց երկու անձի անուն: Սոնիկի հետ հեռախոսային քննարկում եղավ, որի ժամանակ ներկայացվեցին ծրագրի մանրամասները, և խոսվեց իր կողմից հավաքվող թեյաբույսերի հավաքման, մշակման և չորացման մասին: Մեր կարծիքով գյուղում շատ կլինեն նման գյուղացիներ, որը սակայն մենք կկարողանանք ճշգրտել գարնան շեմին: Մեր կարծիքով կլինեն նաև նոր մարդիկ, ովքեր մեր լավագույն առաջարկների հիման վրա կսկսեն զբաղվել այդ գործով, որը իրենց ընտանիքների համար կդառնա բնության միջոցով հաց վաստակելու նոր ճանապարհ: Գարնանը ցուցակը լիովին կհամալրվի: Համայնքապետարանից տեղեկացրին, որ գյուղի բնական տարածքում առկա է և կարելի է հավաքել ուրց, դաղձ, ալոճ, երիցուկ, եզան լեզու, նանա, սրոհունդ, անթառամ, կարմիր և սև մասուր, վայրի հաղարջ, խատուտիկ և այլ օգտակար բույսեր: Գարնանն ընդառաջ կձևավորենք գյուղացիներից բաղկացած ֆոկլուս թիմ, որի հետ կարելի է աշխատել: Հետաքրքրում էր ապրանքի արժեքը:

**Մարմարիկ** գյուղում հանդիպեցինք համայնքապետարանի աշխատակազմի ներկայացուցիչ Գուրգեն Տոնոյանի հետ: Զրույցի ժամանակ պարզվեց, որ կան մի քանի անձինք, որոնք զբաղվում են մեզ հետաքրքրող թեյաբույսերի հավաքմամբ: Սակայն ավելի մանրամասն տեղեկություն չունեին:

Դարձյալ մեկ-երկու օրից մեզ տրամադրվեց երկու անձի անուն, որոնք երկար տարիներ զբաղվում էին թեյաբույսեր հավաքելով և վաճառքով: Սակայն մենք կարծքում ենք, որ սա ոչ ամբողջական պատկերն է, և գարնանը մենք կավելացնենք այս թիվը: Զրույցների ժամանակ պարզեցինք, որ գյուղում հավաքում են ուրց, դաղձ, ալոճ, երիցուկ, եզան լեզու, սրոհունդ, անթառամ, կարմիր և սև մասուր, վայրի հաղարջ, խատուտիկ, լորենու ծաղիկ և տերև, մայրամախոտ, հազարատերևուկ և այլ օգտակար բույսեր:

Գարնանը կկարողանանք Մարմարիկում ևս ստեղծել մոբիլ խումբ, որի շարքերը կարձ ժամանակում կհամալրվեն նոր գոյղացիներով, որոնք կկարողանան իրենց ընտանիքների կենսապահովման խնդիրը լուծել: Հետաքրքրում էր ապրանքի արժեքը:

**Մեղրաձորում** համայնքապետարանի աշխատակից Ռիմա Մանուկյանը մեզ լսեց և պատրաստակամություն հայտնեց օգտակար լինել նախագիծը կյանքի կոչելու և համագյուղացիներին աջակցելու, ինչպես նաև այլ տեղեկատվություն փոխանցելու հարցերում:

Մեր և համայնքապետարանի տվյալներով պարզեցինք, որ Մեղրաձորում ավելի շատ կանայք և տղամարդիկ են զբաղվում բնության տված բարիքները հավաքելով, որով

հոգում են իրենց սոցիալական հոգսերը: Կարծում ենք սոցիալական ձեռնարկությունը ավելի կխթանի այստեղ ձևավորվող խմբի հետագա աշխատանքները: Հատկապես այն պարզ պատճառով, որ բնությունն այստեղ ավելի հարուստ է և մոտակա անտառը շատ հնարավորություններ է ստեղծում թեյաբույսեր և հատապտուղներ հավաքելու համար: Իսկ այստեղ շատ բան կա հավաքելու՝ ուրց, դաղձ, ալոճ, երիցուկ, եզան լեզու, սրոհունդ, անթառամ, կարմիր և սև մասուր, վայրի հաղարջ, խատուտիկ, լորենու ծաղիկ և տերև, մայրամախոտ, հազարատերևուկ, խնկածաղիկ, արջի չամիչ և այլ օգտակար բույսեր: Գյուղացիների հետ հեռախոսագրույցները ցույց տվեցին, որ պատրաստ են համագործակցել և ստանալ մեր խորհուրդներն ու աջակցությունը, միայն թե իրենց չարչարանքի արդյունքը իրացվի, և նաև վստահելի գործընկեր լինի:

**Փյունիկ և Արտավազ** միացյալ համայնքի ղեկավար Ռեմ Հովհաննիսյանը և նաև մյուս աշխատակիցները հանդիպման ժամանակ, լսելով մեր նախագծի մասին, շատ կարևորեցին այն: Սակայն քննարկման ժամանակ նշեցին, որ փոքր համայնքներ են և տեղեկություն չունեն, թե կան արդյոք գյուղացիներ որոնք զբաղվում են թեյաբույսեր և հատապտուղներ հավաքելով և իրենց ապրուստը հոգում են դրանցով: Նույնիսկ պարոն Հովհաննիսյանը նշեց, որ ինքը հարևան գյուղացիներից է թեյաբույսերի գնումներ կատարում: Սակայն մենք համոզված ենք, որ բոլոր դեպքերում կլինեն որոշ ընտանիքներ ովքեր այնուամենայնիվ կզբաղվեն այդ գործով: Թվական տվյալները կպարզենք գարնանը:

**Հանքավանում**, որ մեծ մասամբ հանգստյան գոտի է, հիմնական բնակչությունը քիչ է, և մեծամասամբ ներգրավված է հյուրանոցային ոլորտում: Պարզվեց, որ չկան այդ գործով զբաղվողներ տեղացիներ, և հավաքողները գալիս են ուրիշ բնակավայրերից ու Երևան, Հրազդան քաղաքից: Նշենք, որ այստեղ ևս առատ է բուսական աշխարհը, որը լայն հնարավորություններ է ստեղծում հավաքչությամբ զբաղվող անձանց համար: Եվ մեծ հնարավորություններ կարող են բացվել ընտանիքների կենսապահովման խնդիրները հոգալու համար: Միայն պետք է կազմակերպված և նպատակային աշխատել:

**Քաղսիի** համայնքապետ Ռաֆայել Գրիգորյանը մեզ հետ զրույցի ժամանակ կարևորեց մեր նախաձեռնությունը և բարձր գնահատեց մեր ջանքերը: Մի քանի օր անց մեզ տեղեկացրին, որ համայնքում չեն գտել մարդկանց, որոնք զբաղվում են այդ գործով: Այս ամենը մեզ այնքան էլ հավաստի չի թվում: Կարծում ենք՝ գարնանը, երբ կսկսվի սեզոնը, մենք կկարողանանք գտնել շատ գյուղացիներ, ովքեր արդեն երկար ժամանակ հավաքում են տարբեր թեյաբույսեր և իրացնում են տարբեր շուկաներում: Մեր առաջարկները նրանց կշահագրգռեն աշխատել նորաստեղծ սոցիալական ձեռնարկության հետ: Համայնքապետը նշեց, որ գյուղի տարածքում առկա են ուրց, դաղձ, ավելուկ, երիցուկ, եզան լեզու, սրոհունդ, կարմիր և սև մասուր, խատուտիկ, մայրամախոտ, հազարատերևուկ և այլ օգտակար բույսեր:

**Սուլակ գյուղի** համայնքապետարանում մենք ղեկավարին չգտանք, և մեզ ընդունեց աշխատակից Քնարիկ Սուքիասյանը: Տիկին Քնարիկը մեզ ասաց, որ ինքը տեղյակ է, որ կան կանայք, որոնք զբաղվում են այդ գործով և տուն են պահում վաստակած գումարով: Նա ասաց, որ համայնքի վարչական տարածքը գրեթե անտառազուրկ է, և կարելի է հավաքել ուրց, դաղձ, ալոճ, երիցուկ, եզան լեզու, սրոհունդ, կարմիր և սև մասուր, խատուտիկ, մայրամախոտ և այլ օգտակար բույսեր: Մեզ փոխանցվեց երկու անձից բաղկացած փոքրիկ ցուցակ: Նախնական պայմանավորվածության համաձայն՝ մենք պետք է փոքր ժողով անեինք համայնքում և ներկայացնեինք մեր անելիքները: Սակայն համավարակի պատճառով դա չեղարկեցինք և հեռախոսային զրույց ունեցանք: Պարզեցինք, որ երկար ժամանակ է՝ զբաղվում են այդ գործով և կարողանում են իրենց օրվա հացը վաստակել: Պատրաստակություն հայտնեցին համագործակցել մեզ հետ: Սակայն գարնանը նոր հանդիպում կունենանք իրենց հետ, և կարծում ենք՝ մարդկանց թիվը ավելի շատ կարող է լինել:

**Բջնի** գյուղի վարչական ղեկավար Հովհաննես Անդրեասյանի հետ զուցեցինք բավական երկար, որին միացան նաև գյուղապետարանի մյուս աշխատակիցները: Բավականին արդյունավետ քննարկում էր, որի ժամանակ նշվեց, որ գյուղացիների համար ամենից առաջ կարևոր է ապրանքի արժեքը:

Համայնքի ղեկավարը նշեց, որ կլինեն մարդիկ ովքեր զբաղվում են բնության տված բարիքներ հավաքելով, սակայն ժամանակ խնդրեց ճշտելու և ցուցակ փոխանցելու համար: Ղեկավարի տեղակալը հնարավոր համարեց, որ էթե կանոնավոր համագործակցություն լինի, մարդիկ հասկանան, որ այդ գործով զբաղվելով կարող են իրենց ընտանիքների հացը վաստակել, շատերը կմիանան նոր ձևավորվող թիմին և դաշտերից կհավաքեն ու մշակելով թեյաբույսեր ու պտուղներ կհանձնեն սոցիալական ձեռնարկությանը:

Մինչ իրենք կփոխանցեն իրենց պաշտոնական տվյալները, մենք արդեն 3-4 կանանց տվյալ ունենք, նույնիսկ մի մասի հետ արդեն համագործակցություն կա: Այստեղ ևս հավաքվում է ուրց, դաղձ, ալոճ, երիցուկ, եզան լեզու, սրոհունդ, կարմիր և սև մասուր, խատուտիկ, մայրամախոտ, հազարատերևուկ, խնկածաղիկ, նանա, արջի չամիչ և այլ բուսատեսակներ, որոնցով մարդիկ հոգում են իրենց ընտանիքի ապրուստը:

**Լեռնանիստ** համայնքի ղեկավարի հանձնարարությամբ մեզ հետ զրուցեց աշխատակից Հովհաննեսը և մեկ կին աշխատող: Նրանք ասացին, որ բավականին հարուստ բնակլիմայական գոտում է գյուղը և լի է թեյաբույսերով ու օգտակար բուսատեսակներով: Նշեցին նաև, որ այլ գյուղերից և բնակավայրերից են գալիս իրենց գյուղի դաշտավայրեր ու հավաքում խոտաբույսեր: Գարնանն ընդառաջ մենք այլ աղբյուրներից կարող ենք պարզել համայնքում այդ գործով զբաղվող գյուղացիների տվյալներ: Նրանք նշեցին, որ գյուղի ալպյան մարգագետիններում և լեռնալանջերին կարելի է հավաքել ուրց, դաղձ,

երիցուկ, ավելուկ, եզան լեզու, սրոհունդ, անթառամ, կարմիր և սև մասուր, խատուտիկ, մայրամախոտ, հազարատերևուկ, խնկածաղիկ և այլ խոտաբույսեր:

**Ջրառատ** համայնքի աշխատակազմի քարտուղար տիկին Կարինեի հետ հանգամանալից գրույց վարեցինք: Նա ևս խնդրեց ժամանակ ճշտելու և մարդկանց ցուցակ տրամադրելու համար: Փոքր համայնքում քիչ ընտանիքներ են ապրում և քիչ աշխատատեղեր կան: Մենք նշեցինք, որ նախագիծը իրական հնարավորություններ է բացում շատերի համար ապրուստի միջոց վաստակելու համար: Մի քանի օր անց նա մեզ ասաց, որ չի գտել նման կանանց, որոնք զբաղվում են այդ գործով: Մակայն մենք համոզված չենք, որ չկան նման անձինք: Այս ամենը պարզել հնարավոր է միայն զարնանը, երբ կսկսվեն սեզոնային հավաքման աշխատանքները: Եթե անգամ չլինեն, մենք փոքր ժողով-քննարկում կանցկացնենք համայնքում և շատերին կառաջարկենք այս աշխատանքն ու մեզ հետ համագործակցությունը: Տիկին Կարինեն նշեց, որ համայնքի հողային տարածքներում կարելի է գտնել ուրց, երիցուկ, եզան լեզու, սրոհունդ, կարմիր և սև մասուր, խատուտիկ, մայրամախոտ, հազարատերևուկ:

**Հրազդան** քաղաքը կազմված է 7 գյուղական բնակավայրերից՝ Կաքավաձոր, Ջրառատ, Վանատուր, Մաքրավան, Վերին Ախպարե, Ներքին Ախպարե, Կոճոռ և ձգվում է տասնյակ կիլոմետրեր: Թեև այստեղ հետազոտություն նախատեսված չէր, այնուամենայնիվ մենք փորձեցինք գտնել մարդկանց, որոնց հետ կարելի է աշխատել: Առայժմ գտնվել է մեկ հոգի Կաքավաձորից:

**Հրագրանի տարածաշրջանի բնակավայրերում թեյաբույսերի հավաքմամբ և մշակմամբ  
զբաղվող գյուղացի-մենատնտեսների**

**ՑՈՒՑԱԿ**

<b>N</b>	<b>Անուն, ազգանուն</b>	<b>Կարգավիճակը</b>	<b>Համայնքը</b>
1	Մուսան Հախվերդյան	Մենատնտես գյուղացի	Աղավնաձոր
2	Սոնիկ Հակոբյան	Մենատնտես գյուղացի	Աղավնաձոր
3	Ադելաիդա Պետրոսյան	Մենատնտես գյուղացի	Մարմարիկ
4	Ռուբիկ Բարսեղյան	Մենատնտես գյուղացի	Մարմարիկ
5	Սիլվա Կարապետյան	Մենատնտես գյուղացի	Սոլակ
6	Մարիամ Վահանյան	Մենատնտես գյուղացի	Սոլակ
7	Գայանե Գյուրջյան	Մենատնտես գյուղացի	Հրագրան
8	Ռաֆիկ Թադևոսյան	Մենատնտես գյուղացի	Մեղրաձոր
9	Մուսաննա /ազգանունը չհաջողվեց ճշտել/	Մենատնտես գյուղացի	Մեղրաձոր
10	Ադասի Միքայելյան	Մենատնտես գյուղացի	Մեղրաձոր
11	Ասյա Ավագյան	Մենատնտես գյուղացի	Մեղրաձոր

Վերոնշյալ ցուցակը, կարծում ենք, ավարտուն տեսք չունի և մի շարք բնակավայրերում դեռ ճշգրտման գործընթացը շարունակվում է: Գարնանը կկարողանանք ունենալ ամբողջական ցուցակ, երբ կսկսվեն սեզոնային հավաքման աշխատանքները:

\*\*\*

Ուսումնասիրությունների արդյունքում **պարզել ենք**, որ վերոնշյալ բոլոր համայնքներում առկա է մարդկային մեծ ներուժ և կարողություն տնայնագործությամբ և թեյաբույսերի հավաքչությամբ զբաղվելու համար, որը կարելի է կանոնակարգել, ուղղորդել: Սա կնպաստի գյուղացիական տնտեսությունների աճին, զարգացմանը և նաև սոցիալական ձեռնարկության կարողությունների ավելացմանն ու սոցիալական նախագծերի իրականացմանը, որի առանցքային նպատակը հատուկ կարիքներ ունեցող երեխաներն են:

**2022թ. գարնանը** նախատեսվում են համայնքներում գործնական ֆիզիկական (օֆլայն) հանդիպումներ ընտանիքներում, որոնց ժամանակ դարձյալ կկատարենք կարիքների գնահատում և աշխատանքների սկսում, ինչպես նաև կանոնավոր ֆոկուս խմբերի ստեղծում:

**Նաև 6 ամիսը** մեկ անգամ նախատեսվում է անցկացնել թրեյնինգներ: